

ժամանութիւնը կորած է յամենայն դէպս հայութեան համար, իսկ նոցա վերայ եղած ծախքով շատ աւելի մեծ գործ կարելի է կատարել մայր երկրում, և հասարակութեան աւելի օգտակար անդամներ պատրաստել:

Ի դէպ. Գանձաստարի հանքերի նկատմամբ ևս ահագին աղմուկ էիք բարձրացրել. ինչպէս է որ կարենոր շտեսար, մեր տուած տեղեկութիւնը հաղորդելու Ձեր ընթերցողներին և նոցա վրդովուած մաքերը խաղաղացնելու:—Ձի՛ կարելի արդեօք Ձեզ ևս խորհուրդ տալ, որ Ձեր Փարիզեան թղթակցի եռանդը մի քիչ զսպէք ու հրաւիրէք՝ լիքը բերանով ու ճոխ լեզուով այս և այն կողմ՝ զայրոյթի ու զղուանքի արտայայտութիւններ շուայլելուց առաջ մի լաւ հասկանալ, թէ բանն ինչո՞ւմն է: Ախար Կարթէզեան կարգը, որի հիմքը դրել է Կեօշի դպրոցի տեսուչ Բրաւնօ 1086 թ. ին՝ ամենախիստ կրօնաւորական ու ճգնական սկզբունքներով, ճարտրէօզ կոչուած լեռնային դաժան ընտութիւն ունեցող մի վայրում, և որ մինչև վերջին ժամանակներս կաթողիկէ կրօնաւորութեան մէջ ամենախիստակեաց կարգերից մէկն է եղել՝ չի կարող 17 դար բռնացած լինել Ծրանսիայի վերայ և անլուր ուճիրներ գործած. իսկ այն հանգամանքը, որ Հենրիկոս Գ. թագաւորը ձմեռ ժամանակ Ալպերն անցել Գրիդոր Է. սպալի մօտ է գնացել, Կանոտա դղեակի ըսկում հանգնած ստիպել պապին իւր վրայից բանադրանքը վերցնելու, ապա դարձել՝ այդ բանադրանքի անունով ազատամբաժ իշխաններին յաղթել ու պապից էլ ծանր վրէժ առել,— իրաւունք չի տալիս ասելու, թէ Ծրանսիայի ու Գերմանիայի թագաւորները շապկանց, ոտաբոքիկ քաշ էին գալիս պապերի դռներում:



Ա. Զ. Դ

Ի Դիւանէ Վեհափառ Հայրապետի ազգիս:

Կարապետ Պետրոսեան Շահրեստանեան, ի Խուպէկ գեղջէ վիճակին Բալուայ Տաճկաստանի, ութ և տասն ամօք յառաջ թողեալ զկին իւր ի հայրենիս՝ մեկնի յօտարութիւն և ցարդ իսպառ անխնամ զկին իւր թողլով

մնայ զանյայտութեան, մինչ զի կարծիք լեալ են ի հայրենիս իւր, եթէ մեռեալ կայ նա, որպէս հազարդէ նորին Ս. Օծութեան հոգեոր Պետի ազգիս Ամեն. Ս. Պատրիարքն Կ. Պօլսոյ:

Արդ, ըստ բարձու հրամանի Վեհափառ Հայրապետի, յայտարարելով զանյայտութենէ յիշեալ անձին յէջս «Արարատ» ամսագրոյ Մայր Աթոռոյս, սրոշի վեցամսեայ ժամանակ վասն ստոյգ տեղեկութեան: Եթէ յետ վեցից ամսոց յօրէ հրատարակութեանս չերևեսցի անձն այն և ոչ յայանեսցի տեղի բնակութեան նորա, յայն դէպս պսակն նորա ընդ անբախտացեալ կնոջ իւրոյ նազլուի լուծեալ համարի Հայրապետական վճռով և թոյլատրի վերջնոյն մասնել ի նոր ամուսնութիւն՝ ընդ ձեռն Պատրիարքարանի Կ. Պօլսոյ, իսպառ զրկելով զայրն յիրաւանց վերստին ամուսնութեան:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

Եկեղեցասէր մի անձնաւորութիւն, նպատակ ունենալով եկեղեցականութեան և ժողովրդեան հաւասարապէս օգտակար լինիլ, առաջինին քարոզի նիւթը ուսումնասիրելու և պատրաստելու առիթ ընծայելով և վերջինին ալ քարոզի գիւրք մը մատուցանելով, որոշած է՝ գրուած քարոզներու մրցում՝ մը բանալ, և ընարելագոյն քարոզներէ հատոր մը հրատարակել ի պէտս հաւատացելոց:

Մրցման կրնան մասնակցիլ ամեն եկեղեցականք, որք Հայ. Ուղղափառ ս. եկեղեցւոյ պաշտօնեայ են, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ, մինչև սարկաւազները, և որք դատապարտութեան մը ներքև չեն գտնուիր:

Քարոզ գրողները պէտք է ծածկանունով մը նշանակուին կամ ստորագրեն և միանգամայն կնքեալ պահարա-